Հայաստանի Հանրապետության
Գիտությունների Ազգային Ակադեմիա
Մոլեկուլային կենսաբանության
Ինստիտուտ ՊՈԱԿ

National Academy of Sciences
of the Republic of Armenia
Institute of Molecular Biology
SNGO

N2465-069
13.03.2015թ

ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8 ծածկագրով ընթացակարգի
հնարավոր մասնակիցներին

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերել Գնումների աջակցման կենտրոնի և Ձեր միջև կնքված համապատասխանաբար ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8-1-ից ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8-568 շրջանակային համաձայնագրերով նախատեսված ապրանքներ:

Սույն հրավերի ծածկագիրն է՝ <ՄԿԻ-ՇՀԱՊՁԲ-11/8-15/2>:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ հայտերը անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Հասրաթյան 7, 2-րդ հարկ, հաշվապահություն հասցեով, Նարինե Հայրապետյանին, մինչև 2015թ. Մարտի 25-ի ժամը 12:00-ը:

Հայտերը կբացվեն ք. Երևան, Հասրաթյան 7, 2-րդ հարկ, հաշվապահություն հասցեում, 2015թ. Մարտի 25-ին ժամը 12:00-ին:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Տնօրենի ԺՊ Ա. Առաքելյան

Կատրող՝ Նարինե Հայրապետյան
Հեռ. 28-26-22; 095-51-52-70

ՀՀ,0014 Երևան, Հասրաթյան, 7 «» Հեռ. 37410281626 «» Ֆաքս 37410282061 «» էլ.փոստ imb@sci.am
7 Hasratyan St., 0014 Yerevan, RA «» Tel. 37410281626 «» Fax 37410282061 «» E-mail imb@sci.am
www.molbiol.sci.am

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան **<<-------->>-Մարտ--2015թ.**

<<---------->> ընկերությունը, ի դեմս տնօրեն ----------ի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Մատակարար), մի կողմից, և ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային Կենսաբանության Ինստիտուտ ՊՈԱԿ ընկերությունը, ի դեմս տնօրեն ԺՊ Ա.Առաքելյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

1.1 Մատակարարը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին հանձնել՝ սույն պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված Տեխնիկական բնութագրով սահմանված համակարգչային տեխնիկա այսուհետ՝ Ապրանք, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Մատակարարման պայմանները

2.1 Մատակարարը Չափաբաժին 1-10 Ապրանքները պետք է մատակարարի պայմանագրի կնքումից հետո առնվազն 30 աշխատանքային օրվա ընթացքում:

2.2 *Չափաբային 1-ում Պահանջվող համակարգիչը նախատեսված է հատուկ մասնագիտական ծրագիր աշխատացնելու համար, ուստի անհրաժեշտ է որպեսզի առաջարկվող համակարգիչը լինի անպայման բրենդային, գործարանային արտադրության, այլ ոչ թե տեղական հավաքածու, հակառակ դեպքում այդ ծրագիրը չի աշխատի:*

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը 2-րդ կետով սահմանված ժամկետում Մատակարարի կողմից չտրամադրվելու դեպքում հրաժարվել Ապրանքից,

3.1.2 Եթե տրամադրվել է սույն պայմանագրի պայմաններին չհամապատասխանող որակի Ապրանք, ապա՝

ա) պահանջել հատուցել Ապրանքի անորակ լինելու պատճառով իր կողմից կրած վնասները,

բ) չընդունել Ապրանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով ողջամիտ ժամկետ սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինելու համար, պահանջել Մատակարարից վճարել սույն պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը,

գ) հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնել Ապրանքի համար վճարված գումարը:

3.1.3 Եթե հանձնվել է թիվ 1 հավելվածով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից,

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը,

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքների փոխարինում սույն պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքներով:

3.1.5 Մատակարարի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը,

3.1.6 Մատակարարից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Մատակարարի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն սույն պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը,

3.1.7 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Մատակարարն էականորեն խախտել է սույն պայմանագրի պայմանները՝

3.1.7.1 Մատակարարի կողմից պայմանագրի պայմանների խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) բազմիցս խախտվել են Ապրանքի մատակարարման ժամկետները.

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Մատակարարին:

3.2 Գնորդը պարտավոր է,

3.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները,

3.2.2 Մատակարարի կողմից հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Մատակարարին,

3.2.3 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Մատակարարին ծանուցել թերությունը հայտնաբերելուց անմիջապես հետո կամ որոշակի ողջամիտ ժամկետում, եթե պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.4 Սույն պայմանագրի 3.3.3 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Մատակարարին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Մատակարարն իրավունք ունի,

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը,

3.3.2 Գնորդից պահանջել վճարելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները,

3.3.3 միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Գնորդն էականորեն խախտել է սույն պայմանագրի պայմանները:

3.4 Մատակարարը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում,

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք,

3.4.3 Գնորդին հանձնել սույն պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր,

3.4.4 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը,

3.4.5 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը,

3.4.6 սույն պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները,

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1Սույն պայմանագրի գինը կազմում է ---------- /----------/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ: Գինը ներառում է Մատակարարի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

4.2Սույն պայմանագրով մատակարարման ենթակա Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը, ներառյալ ԱԱՀ, ներկայացված է սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 1 հավելվածում:

4.3Գնի ցանկացած փոփոխություն իրականացվում է միայն համաձայնագրով:

4.4Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Մատակարարի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

4.5Վճարումը կատարվում է սույն պայմանագրի 6 կետում նշված հաշիվ-ապրանքագիրն երկկողմանի ստորագրելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

5. Ապրանքի որակը

Մատակարարը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Մեկ տեսակի գերազանցմամբ Ապրանքի հանձնումը չի ծածկում այլ տեսակի Ապրանքի թերի հանձնումը:

6.2 Մատակարարն Ապրանքը հանձնելիս Գնորդին է ներկայացնում հանձնված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հաշիվ-ապրանքագրի երկուական օրինակ:

6.3 Գնորդը՝ հաշիվ-ապրանքագիրը ստանալու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում Մատակարարին է ներկայացնում իր կողմից ստորագրված հաշիվ-ապրանքագրի մեկական օրինակը կամ հաշիվ- ապրանքագիրը չստորագրելու պատճառաբանված մերժումը:

6.4 Ապրանքը Գնորդի կողմից ընդունված է համարվում Ապրանքը ստանալուց հետո՝ մեկ ժամվա ընթացքում՝ վատ որակի վերաբերյալ բողոք չներկայացնելու պահից:

6.5 Բողոքը համարվում է ներկայացված, եթե առկա է գրավոր բողոք կամ Գնորդի կողմից Մատակարարի պատասխանատու անձանց՝ վատ որակի վերաբերյալ տեղեկացման ձայնագրությունը:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1Մատակարարը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և սույն պայմանագրի թիվ 2 հավելվածով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Մատակարարի կողմից սույն պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների խախտման դեպքում Մատակարարից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ սահմանված ժամկետում չմատակարարված ապրանքի գնի 0,05 տոկոսի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացուցային օրերով:

7.3 Սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Մատակարարին վճարման ենթակա գումարներից:

7.4 Սույն պայմանագրով սահմանված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող

Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Մատակարարից գանձվում է տուգանք՝ Ապրանքի ընդհանուր գնի 0, 5%-ի չափով:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրով նախատեսված վճարման ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը <ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ>

Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև **2015թ-ի մայիսի 29-ը**՝ կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

9.2 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

9.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը.

2) սույն պայմանագրով նախատեսված ապրանքի, աշխատանքի կամ ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գների որոշման և դրանց փոփոխության գնահատման կարգը սահմանվում է պայմանագրով՝ նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

9.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են։

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա։ Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը։

9.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով։ Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում։

9.6 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության։ Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության։

9.7 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը։

9.8Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
<ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ> ՊՈԱԿ Հասցեն՝ Ք. Երևան, Հասրաթյան 7 Բանկը՝ ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ բանկ ՓԲԸ Զեյթուն մասնաճյուղ Հ/Հ 220305140422000 ՀՎՀՀ 00008732 ---------- ¥ë ï áñ ³ · ñáõÃÛáõÝ¤ Î®Î	---------- ¥ë ï áñ ³ · ñáõÃÛáõÝ¤ Î®Î

ՀԱՎԵԼՎԱԾ N 1

2015թ. N _____

Համակարգչային տեխնիկայի Գնման հրավեր

Մատակարարման ենթակա ապրանքների տեխնիկական բնութագիրը

Անվանում		Չափման միավոր	Բնութագիր	Գինը մեկ միավորի համար	Ընդհանուր գումարը	Քանակը
1	համակարգիչ	հատ	**Համակարգիչ՝ HP Z820 Workstation (Աշխատանքային կայան) (կամ համարժեք)** Կոնֆիգուրացիա՝ **Համակարգչի իրան:** HP Z820 1125W 90% արդյունավետությունով իրան - HP Z820 1125W 90% Efficient Chassis **Պրոցեսոր:** Intel® Xeon® E52650 v2 (2.60ԳՀց քեշ-հիշողություն 20Մբ, հիշողության արագություն DDR3-1866, 8 միջուկ (Core)) **Հովացուցիչ:** HP Single Processor Air Cooling Kit (Մեկ պրոցեսորի հովացուցիչային հավաքածու) **Գրաֆիկական քարտ:** NVIDIA Quadro K4000 3Գբ DLDVI(I)+DP+DP **Օպերատիվ հիշողություն:** 24Գբ DDR3-1866 (3x8Գբ, 1CPU (Ռեգիստրով) Registered RAM **Կոշտ սկավառակ:** 500GB 7200 RPM SATA **Գրաֆիկական պրոցեսոր:** C2J82AV NVIDIA Tesla K20 ***<u>Ուշադրություն դարձրեք անպայման 2.2 կետին</u>***			*1*
2	Համակարգիչ	հատ	**Կոշտ սկավառակ:** 500Գբ 7200rpm. SATA3 **Պրոցեսոր:** Intel Dual Core G1620 2.7ԳՀց **Մայր սալիկ:** Asus H61M-K կամ համարժեք **Օպերատիվհիշողություն:** 2Գբ 1333ՄՀցDDR3 **Սկավառակակիր:**DVD-RW **Վիդեոքարտ:** Intel GPU HD2000 մինչև 1Գբ, կամ համարժեք **Իրան:**ստանդարտ ATX **Սնուցման սարք:**400Վտ			*5*
3	Համակարգիչ	հատ	**Կոշտ սկավառակ:** 1Տբ 5400 պտույտ/րոպե. **Պրոցեսոր:** Intel Core-i5-3470T (2.9ԳՀց, քեշ-հիշողություն 3Մբ) կամ համարժեք **Մայր սալիկ:** Asus H61M-K կամ համարժեք **Օպերատիվհիշողություն:** 12Gb DDR3 **Սկավառակակիր:**DVD-RW **Վիդեոքարտ: ինտեգրված մայր սալիկում** **Իրան:**ստանդարտ ATX **Սնուցման սարք:**մինիմում 450 Վտ			*1*

4	Համակարգիչ	հատ	**Կոշտ սկավառակ:** 1Տբ 5400 պտույտ/րոպե. **Պրոցեսոր:** Intel Pentium G3250 (3.2ԳՀց, քեշ-հիշողություն 3Մբ) կամ համարժեք **Մայր սալիկ:** Asus H61M-K կամ համարժեք **Օպերատիվհիշողություն:** 4Գբ DDR3 **Սկավառակակիր:**DVD-RW **Վիդեոքարտ: ինտեգրված մայր սալիկում** **Իրան:**ստանդարտ ATX **Սնուցման սարք:**400 Վտ			*1*
5	Մոնիտոր	հատ	ՄՈՆԻՏՈՐ IPS մատրիցա, թույլատրող ընդունակություն (resolution) 1920 x 1080, 21 կամ 22 դույմ			*1*
6	Մոնիտոր	հատ	Samsung SyncMaster S19C150LED 18.5 դույմ կամ համարժեք			*5*
7	Մոնիտոր	հատ	ՄՈՆԻՏՈՐ SAMSUNG S22D300N 21.5 դույմ կամ համարժեք			*1*
8	Մոնիտոր	հատ	ՄՈՆԻՏՈՐ BENQ GL2023A 19.5 դույմ կամ համարժեք			*1*
9	Մկնիկ	հատ	Genius 120 սերիայի կամ համարժեք			*3*
10	Ստեղնաշար	հատ	Genius 110 սերիայի կամ համարժեք			*3*

ԳՆՈՐԴ

<ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության
ինստիտուտ> ՊՈԱԿ
Հասցեն՝ Ք. Երևան, Հասրաթյան 7
Բանկը՝ ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ բանկ ՓԲԸ
Զեյթուն մասնաճյուղ
Հ/Հ 220305140422000
ՀՎՀՀ 00008732

¥ë ï áñ ³ · ñáõÃÛáõÝ¤
Î®î

ՎԱՃԱՌՈՂ

¥ë ï áñ ³ · ñáõÃÛáõÝ¤
Î®î

ՀԱՎԵԼՎԱԾ N 2

2015թ. N _____

Համակարգչային տեխնիկայի Գնման հրավեր

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չափա-բաժնի համա-րը	Ապրանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2015թ	
		Ապրիլ-մայիս 2015թ	Ընդամենը Տարի
1	համակարգիչ	100%	**100%**
2	Համակարգիչ	100%	**100%**
3	Համակարգիչ	100%	**100%**
4	Համակարգիչ	100%	**100%**
5	Մոնիտոր	100%	**100%**
6	Մոնիտոր	100%	**100%**
7	Մոնիտոր	100%	**100%**
8	Մոնիտոր	100%	**100%**
9	Մկնիկ	100%	**100%**
10	Ստեղնաշար	100%	**100%**

ԳՆՈՐԴ

<ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության
ինստիտուտ> ՊՈԱԿ
Հասցեն՝ Ք. Երևան, Հասրաթյան 7
Բանկը՝ ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ բանկ ՓԲԸ
Զեյթուն մասնաճյուղ
Հ/Հ 220305140422000
ՀՎՀՀ 00008732

¥ë ï áñ ³ · ñáõÃÛáõÝ¤
Î®Î

ՎԱՃԱՌՈՂ

¥ë ï áñ ³ · ñáõÃÛáõÝ¤
Î®Î